ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵԳ-ՀՄԱՅԻԼՆԵՐԸ ԵՎ ՎԵԳ-ԽԱՂԱԼԻՔՆԵՐԸ

Հին Հայաստանի նյութական մշակույթում կարևոր տեղ են գրավում զարդերը և հմայիլները, որոնք, պերճանքի առարկա լինելուց բացի, կարևոր նշանակություն ունենա հողեղեն մշակույթի ուսումնասիրության համար։ Հմայիլների թվին են պատկանում նաև վեգերը (ճան)[1], որոնք մինչև այժմ տեսանելի ուսումնասիրության նյութ չեն դարձել։ Հայաստանի հնավայրերից հայտնաբերված վեգերի մեծ մասը սլխարի և այծի են։ Կովի, եզան և ձիու վեգերը համեմատաբար քիչ են հանդիպում և գերազանցապես անմշակ են։ Որոշ դեպքերում վեգերը հանդիպում են մի քանի տասնյակի կամ հարյուրների հասնող խմբերով (մշակված և անմշակ), ինչպես օրինակ՝ Լորուտ գյուղում պեղված բրուտի վազ բրոնզեդարյան արհեստանոցում[2], Լճաշենի պեղումների ժամանակ բացված № 45 դամբարանում[3] (ուշ բրոնզի դար), Մեծամորում[4] (միջին բրոնզի դար), Արթիկի № 109 դամբարանում[5] (ուշ բրոնզի դար), Այգեհովտում[6] (երկաթի դար), Գառնիում[7] (անտիկ) և այլուր։ Հարուստ նյութ կա նաև նշված հուշարձաններին համաժամանակյա այլ հուշարձաններից. Վրաստանում՝ Ալազանի հովտի մ. թ. ա. III հազարամյակով թվագրվող երկրորդ կուրգանում[8], Կվացխելիրի c₁ շերտում[9], Թլիի դամբարանադաշտի № 66 դամբարանում[10], Հատկապես շատ են հանդիպում հյուսիս մերձսևծովյան հուշարձաններում (Գանտիկապել, Օլվիա, Միրմեքիա և այլն)[11]։

Հայաստանից հայտնաբերված վեգերը ըստ կիրառման բաժանվում են երկու խմբի՝ խաղավեգերի և հմայիլների։ Խաղավեգերի թվին են դասվում անմշակ, ներկված և մեկ կամ մի քանի կողմը հարթեցված վեգերը։ Երկրորդ խմբի մեջ մտնում են միայն միշանցիկ անցքով վեգերը։

Պեղավայրերում հանդիպող անմշակ վեգերը կամ պարզապես սննդի մնացորդներ են, կամ էլ, թաղման ծեսի համաձայն, դամբարաններում են դրվել՝ խորհրդանշելով զոհաբերված կենդանիները[12]։ Սակայն պետք է ենթադրել, որ կուլտերով հանդիպող անմշակ վեգերը ժամանակին եղել են խաղավեգեր։ Ըստ աղբյուրական նյութի, դյուցազուն պատանիները իրենց վեգերը պահել են ամանների (փարչերի) մեջ կամ էլ՝ թաղել[13]։

Խաղավեգերի մեջ առանձին խումբ են կազմում ներկված վեգերը։ Սրանք նույն անմշակ վեգերն են, միայն ներկված են կարմիր գույնով։ Նման վեգեր են հայտնաբերվել տարբեր ժամանակաշրջաններով թվագրվող հուշարձաններից՝ Արթիկից[14] (ուշ բրոնզի դար), Գառնիից[15] (անտիկ), Դվինից[16] և Ամբերդից[17] (միջնադար)։ Այս վեգերի մեծ մասի

---

1 Կճղակավոր կենդանիների ծնկահոդի ոսկորը։

2 Վ. Ավետյան, Լճաշենի 1984—85 թթ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտություններ, 1986, № 10, էջ 92)։

3 Նույն տեղում, էջ 91։

4 Է. Խանգադյան, Կ. Մկրտչյան, Է. Պարսամյան, Մեծամոր, Երևան, 1973, էջ 21, 66։

5 Т. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, с. 144.

6 Պեղումները պատմ. գիտ. դոկտոր Ս. Եսայանի։ Նյութերը հրապարակված չեն։

7 Ж. Хачатрян, Гарни V. Античный некрополь, Ереван, 1976, погр. 63 А.

8 Ш. Дедабришвили, Курганы Алазанской долины (Труды Кахетинской археологической экспедиции, II, Тбилиси, 1979, с. 50, табл. XLI₂).

9 К. Пицхелаури, Восточная Грузия в конце бронзового века, Тбилиси, 1979, с. 52.

10 Б. Техов, Тлийский могильник, Тбилиси, 1980, с. 22.

11 Б. Петере, Косторезное дело в античных государствах Северного Причерноморья, М., 1986. с. 79.

12 Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 144։

13 Վ. Բդոյան, Հայ ժողովրդական խաղեր (այսուհետև՝ ՀԺԽ), հ. 2, Երևան, 1980, էջ 31։

14 Т. Хачатрян, նշվ. աշխ., էջ 141։

15 Հայաստանի պետական պատմական թանգարան (այսուհետև՝ ՀՊՊԹ), ինվ. № 2099/81։

16 ՀՊՊԹ, ինվ. № 2121/130։

17 ՀՊՊԹ, ինվ. № 2249/253։

վրա ներկը պահպանվել է մասամբ։ Ներկված վեգերով խաղերի մասին տեղեկանում ենք նաև ազգագրական նյութերից. հայկական ժողովրդական որոշ խաղեր խաղացել են միայն միագույն կամ տարբեր գույներով ներկված վեգերով[18]։

Խաղավեգերի մեջ առանձնանում է անմշակ վեգերի մի խումբ, որոնց մեջ խուլ անցք է փորված և լցված մետաղով (անագ կամ կապար /արճիճ/)։ Հայաստանում նման վեգերի վաղ օրինակներ մեզ հայտնի չեն։ Ոչխարի մի այդպիսի վեգ ունենք միայն միջնադարյան Դվինի պեղումներից[19]։ Վեգի մեջ մետաղ լցնելով այն ծանրացրել են՝ խաղերի համար ավելի հարմար դարձնելու նպատակով։ Այդ վեգերը ունեցել են հատուկ անուն՝ արճճոտան, անաքա (հանաքա, էնեքե)[20], խամուկ[21], լոք[22]։ Հաճախ վեգը ծանրացնելու համար փաթաթել են բրոնզե կամ երկաթե լարով[23]։ Վեգախաղերը այնքան տարածված են եղել, որ վեգեր պատրաստել են նաև մետաղից։ Բրոնզից ձուլված վեգեր են հայտնաբերվել Արտաշատից[24]։ Մետաղից վեգ պատրաստելը կամ մետաղով վեգը ծանրացնելու սովորությունը շատ էր տարածված նաև հյուսիս մերձսևծովյան շրջաններում։ Օրինակ՝ մետաղով լցված խոշոր եղջերավոր կենդանու վեգ է հայտնաբերվել Միխայլովկա գյուղի մոտ գտնվող բնակատեղիի մ. թ. II—III դդ. թվագրվող շերտից[25]։ Այդտեղից հայտնաբերվել է նաև բրոնզաձույլ վեգ՝ նման Արտաշատից հայտնաբերվածներին։ Խարակսի պեղումներից գտնվել է կապարից պատրաստված վեգ[26]։ Վեգի լայն տարածման մասին են վկայում նաև վեգաձև անոթները (Պանտիկապեյ մ. թ. ա. IV դ.[27], Սոֆիայի ազգային հնագիտական թանգարան /անտիկ/։ Այն օգտագործվել է նաև որպես դրոշմիչ. գտնվել է ծանրոցաքար, որի կողքին վեգի նեղ Տ-աձև կողմով դաջվածք է արված[28]։

Խաղավեգերի մի խումբ են կազմում մեկ կամ մի քանի կողմը հարթեցված վեգերը։ Այդպիսի օրինակ մեզ հայտնի է Մուխաննաթ-թափայից։ Դա խոշոր եղջերավոր կենդանու վեգ է, որի նեղ կողմերը հարթեցված են[29]։ Երկու նեղ կողմը հարթեցված ոչխարի մի վեգ հայտնաբերվել է Մեծամորից[30] (միջին բրոնզի դար), Քարաշամբից (ուշ բրոնզի դար)[31], Այգևանից[32] (10 վեգ, ոչխարի և այծի), Արտաշատից[33] (անտիկ), Դվինի[34] և Գառնիի[35] միջնադարյան շերտից։

Բացի Հայաստանից նման խաղավեգեր հայտնի են վերը հիշատակված Ալազանի հովտի կուրգանից (2 վեգ՝ մեկը խոշոր եղջերավոր կենդանու)։ Երկու կողմերը հարթեցված վեգեր են հայտնաբերվել նաև Լեռնային Չեչենիայի Գարինթեփե դամբարանադաշտի № 14 դամբարանից (մ. թ. ա. XVII գ.)[36]։ Դրանք հայտնի են նաև հյուսիս մերձսևծովյան հուշարձաններից[37]։ Հայկական ժողովրդական խաղերի մեջ օգտագործվող հարթեցված վեգերը կոչվում էին լազ կամ զիլա[38]։

---

18 ՀԺԽ, էջ 150, № 360—363։

19 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1982, էջ 40։

20 ՀԺԽ, էջ 32, ծան. 56։

21 Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 235։

22 Ա. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 604, տե՛ս «վեգ» գլխաբառը։

23 Б. Петерс, նշվ. աշխ., էջ 83, աղ. XVII, նկ. 27։

24 Բ. Առաքելյան, Հին Արտաշատ, Երևան, 1975, էջ 44, Ժ. Խաչատրյան, Արտաշատ, II, Երևան, 1981, աղ. 19, նկ. 9։

25 Б. Петерс, նշվ. աշխ., էջ 83, աղ. XVI, նկ. 29։

26 В. Блаватский, Раскопки Харакса в 1931, 1932 и 1935 гг. (Вопросы древней истории, 1938, № 2, с. 322).

27 В. Блаватский, Отчет о раскопках Пантикапея в 1945—1949, 1952, 1953 гг. (Материалы и исследования по археологии СССР, № 103, М., 1962, с. 53, рис. 37).

28 Б. Петерс, նշվ. աշխ., էջ 82, աղ. 16/35։

29 ՀՊՊԹ, ինվ. № 1440/25։

30 Է. Խանզադյան, Կ. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 21, աղ. 4, նկ. 66։

31 Պեղումները Վ. Հովհաննիսյանի։ Նյութերը հրապարակված չեն։

32 Կենդանու տեսակը որոշել է Ս. Մեժլումյանը, որի համար շնորհակալություն ենք հայտնում։

33 Ժ. Խաչատրյան, Արտաշատ, II, դամբարան 7, էջ 58։

34 ՀՊՊԹ, ինվ. № 2449/84։

35 ՀՊՊԹ, ինվ. № 2176/31։

36 В. Марковин, Новые памятники эпохи бронзы в Горной Чечне (Древности Чечено-Ингушетии, М., 1963, с. 131—133).

37 Б. Петерс, նշվ. աշխ., աղ. XVI, նկ. 1—11, 13—26, 28—33։

38 ՀԺԽ, էջ 32, ծան. 57։

Հարթեցված վեգերը օգտագործվել են նաև բախտագուշակության համար։ Մինչև այժմ ժողովրդական ասացվածքներում հանդիպում է «Վեգս ալլու կանգնեց», այսինքն՝ գործս հաջող գնաց, արտահայտությունը[39]։ Բախտագուշակության համար S-աձև կողմը բարեհաջողության նշան էր, իսկ դրան հակառակ կողմը՝ անհաջողության։ Բախտագուշակության համար, հավանաբար, օգտագործվել են խոշոր եղջերավոր կենդանիների վեգերը։ Վեգախաղերը մոլեխաղերի (աղարտային խաղերի) թվին են պատկանում։ Վեգախաղերի տարածված լինելու մասին է վկայում նաև լեզվի և նրա կողմերի անվանումների բազմազանությունը։ Վեգախաղերը զարգացրել են ճարպկություն և աչքաչափ։ Վեգ են խաղացել գարնանը, աշնանը, ձմռանը, հարթ գետնի, կտուրների, սառույցի վրա[40]։ Խաղացել են տոնական տարուբյունների, հատկապես՝ բարեկենդանի ժամանակ[41]։ Դժվար է ասել ազգագրական հայտնի խաղերից որն է հնում օգտագործվել, սակայն, հնարավոր է, որ նմանատիպ խաղեր խաղացել են նաև հին շրջանում։ Հայտնի է, որ անտիկ շրջանում վեգի կողմերը ունեցել են իրենց «արժեքը» (գինը)՝ նեղ տափակ կողմը հավասար էր մեկ միավորի, դրան հակառակ կողմը՝ 6, լայն ներճկված կողմը՝ 3 միավորի, դրան հակառակ՝ լայն ուռուցիկ կողմը՝ 4 միավորի[42]։ Հյուսիս մերձնեծծյան շրջանի հունական բնակավայրերում տարածված է եղել տրոպա (τρόπα) կոչվող խաղը, որը հիմնականում խաղացել են պատանիներն ու երիտասարդները[43]։ Այստեղ տարածված խաղերից մեկը հանդիպում է նաև Հայաստանում (վեգերը շարել են գծած շրջանի մեջ և մեկ այլ վեգով խփել)[44]։

Բացի հնագիտական և ազգագրական տվյալներից վեգախաղերի խիստ տարածված լինելու մասին է վկայում նաև դրանց հիշատակությունը ժողովրդական բանահյուսության մեջ՝ «Սասունցի Դավիթ» էպոսում (Մանուկ Դավիթը ճան էր խաղում)[45], ժողովրդական երգերում[46] և հանելուկներում։

Պեղածո վեգերի մեջ զգալի մաս են կազմում հմայիլ վեգերը, որոնք հանդիպում են մ. թ. ա. III հազարամյակից։ Հնադիներից է Թագավորանիստից հայտնաբերված ոչխարի վեգը[47], որի կենտրոնում արված է միշանցիկ անցք։ Իսկ ուշ բրոնզի դարով թվագրվող, կենտրոնում միշանցիկ անցքով վեգեր մեզ հայտնի են Լճաշենից (ոչխարի և այծի)[48] և Արթիկից[49] (խոշոր եղջերավոր կենդանու վեգ)։ Երկաթի դարով թվագրվող երեք վեգ (ոչխարի և այծի) հայտնի են Լենինականից[50], մեկը՝ կենտրոնում, երկուսը՝ ծայրերին միշանցիկ անցքերով։ Հմայիլ վեգեր են հանդիպում նաև ուրարտական հուշարձաններից՝ Արգիշտիխինիլիից[51] և Կարմիր բլուրից[52] (ոչխարի վեգեր, երկուսի անցքն էլ ծայրից), Հայկաբերդից (Զաուշթեփե[53], միշանցիկ անցքը երկայնակի է, նեղ կողմերին զուգահեռ)։ Հմայիլ վեգերը լայն տարածում են ունեցել նաև անտիկ շրջանում։ Նման վեգեր հայտնի են Արտաշատից և Գառնիից։ Գառնիի՝ վերը հիշատակված դամբարանից հայտնաբերված վեգերի հավաքածուում կան նաև միշանցիկ անցքով վեգեր։ Այդ վեգերի որոշ մասի միշանցիկ անցքերի մեջ պահպանվել է բրոնզե կամ երկաթե մեկական օղակ (աղ., նկ. 6, 7)։ Հմայիլ վեգերի օգտագործումը շարունակվել է նաև միջնադարում, ինչպես դա երևում է Դվինում հայտնաբերված օրինակներից[54]։

Հմայիլ վեգերը տարածված էին ոչ միայն Հայաստանում։ Ալաղանի հովտի վերոհիշյալ դամբարանի վեգերից տասներեքը (ոչխարի և այծի) ունեն միշանցիկ կամ խուլ անցքեր։ Միջին և ուշ բրոնզի դարով թվագրվող հմայիլ վեգեր են հայտնաբերվել Ալգեթի շրջանի

---

39 Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912, էջ 607։

40 Հմմ, էջ 31։

41 Վ. Բդոյան, Հայ ազգագրություն, Երևան, 1974, էջ 192։

42 Б. Петерс, նշվ. աշխ., էջ 80։

43 Б. Петерс, նշվ. աշխ., էջ 79։

44 Հմմ, էջ 149—150, № 358, 359, 364։

45 Սասունցի Դավիթ, Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1939, էջ 190։

46 Գ. Շերենց, Վանա սազ, հավաքածուք Վասպուրականի ժողովրդական երգերի, հեքիաթների, առածների և հանելուկների (տեղական բարբառով), Հ. Ա, Թիֆլիս, 1885, էջ 20—21, հ. Բ, Թիֆլիս, 1899, էջ 13, № 21։

47 ՀՊՊԹ, ինվ. № 1475/44։ Մատյանում նշված է, որ վեգը և շենգավիթյան տիպի խեցեղենը հավաքվել են գետնի մակերեսից։

48 ՀՊՊԹ, ինվ. № 2231/367 և № 2331/82։

49 Т. Хачатрян, Артикский некрополь, Ереван, 1979, погр. 269.

50 ՀՊՊԹ, ինվ. № 1177/11, 32, №2088/70։

51 ՀՊՊԹ, ինվ. № 2425/25։

52 ՀՊՊԹ, ինվ. № 2284/24ա։

53 A. Erzen, Çavuştepe I. Ankara, 1978, res. 24.

54 ՀՊՊԹ, ինվ. № 1543/278։

տարածքից[55]։ Միջանցիկ անցքով վեգեր կան Թլի № 66 դամբարանի վեգերի հավաքածուում[56]։ Նման վեգեր հանդիպում են նաև Սամթավրոյի դամբարանադաշտի նյութերում[57]։ Զորս հմայիլ վեգ է հայտնաբերվել Կոմսոմոլսկոյե գյուղի (Չեչենո-Ինգուշեթիա) մոտ գտնվող դամբարանադաշտից։ Այդ վեգերի վրա միջանցիկ անցքը արված է վեգի նեղ կողմի մոտերին (թվագրվում է մ. թ. ա. II հազարամյակով)[58]։ Միջանցիկ անցքով վեգեր հայտնաբերվել են հյուսիս մերձեռծովյան համարյա բոլոր հունական բնակավայրերից[59]։ Բելյաուսյան դամբարանադաշտի պեղումների ժամանակ դամբարաններից մեկում, դանգի տակ հայտնաբերվել են միջանցիկ անցքով տասը վեգ, որոնք հավանաբար կախված են եղել հանդուցյալի պարանոցից[60]։ Կերչից հայտնաբերվել է մ. թ. I—II դդ. թվագրվող քաղկեդոնից պատրաստված վեգ-հմայիլ[61]։ Մ. թ. ա. I— մ. թ. IV դդ. թվագրվող սաթից, գիշերից, եգիպտական հախճապակուց և ապակուց պատրաստված վեգաձև կախիկներ են հայտնաբերվել Խերսոնեսից, Պանտիկապեյից, Տիրիտակից, Օլվիտյից, Ֆանագորիայից և այլն[62]։

Մեր կարծիքով, վեգերի վրա արված անցքերի դասավորությունը որոշակի նշանակություն չի ունեցել և արվել է ըստ պատրաստողի ցանկության, քանի որ ոչ մի օրինաչափություն չի նկատվում։ Ըստ պատկերացումների հմայիլները պահպանել են չար աչքից, անհաջողությունից։ Վեգ-հմայիլը համարվել է հաջողություն, երջանկություն բերող[63]։ Հնարավոր է, որ դրանք կրել են անասնապահությամբ զբաղվողները, հովիվները, որպեսզի հոտը զերծ մնա վտանգից։

Ամենայն հավանականությամբ, այծի, ոչխարի, կովի կամ ցուլի վեգերը կապված են եղել այդ կենդանիների պաշտամունքի՝ շրի, ամպրոպի, բնության տարերքի և այլ երևույթների հետ, խորհրդանշելով հզորություն, պտղաբերություն, կյանքի հավերժություն և այլն։ Ծայրապատկերներում և բրոնզե գոտիների վրա երկնային լուսատուների պատկերները հաճախ ուղեկցվում են այծերի և ոչխարների պատկերներով։ Հաճախ էլ երկնային լուսատուները և աստղերը պատկերվում էին այծերի և ոչխարների տեսքով[64]։ Այդ են վկայում նաև ազգագրական տվյալները։ Կենդանիների համար պատրաստված հմայիլների վրա փորագրվում էին աստղերի, լուսնի և արեգակի խորհրդանիշներ[65]։ Հայկական ժողովրդական հանելուկներում վեգը հիշատակվում է փոխաբերական իմաստներով։ Մի դեպքում այն փոխարինում է լուսնին, մի այլ դեպքում՝ արևին կամ աստղերին[66]։ Ըստ ազգագրական տվյալների, եր-

---

55 Н. Тушпшвили, Дж. Амирашвили, Археологические раскопки в зоне строительства Алгетского водохранилища (Археологические исследования на новостройках Грузинской ССР, Тбилиси, 1982, табл. XXVIII, рис. 83). Նույնի՝. Результаты полевых работ археологической экспедиции Алгетского ущелья (Полевые археологические исследования в 1979 году, Тбилиси, 1982, с. 51).

56 Б. Техов, նշվ. աշխ., աղ. 51, նկ. VI, 8։

57 А. Каландадзе, Мцхета, IV, Самтавро. Археологические памятники доантичной эпохи, Тбилиси, 1980, рис. 211.

58 М. Багаев, Новый могильник эпохи бронзы в Чечено-Ингушетии (Новое в археологии Северного Кавказа, М., 1986, рис. I/6—9).

59 Б. Петере, նշվ. աշխ., աղ. XV, XVII։

60 О. Дашавская, Земляной склеп на Беляусе (Краткие сообщения Института археологии, М., 1980, вып. 162, с. 95, рис. 4, 6).

61 О. Неверов, Резные камни (Художественное ремесло эпохи Римской империи I в. до н. э.—IV в. н. э., Каталог выставки, Л., 1980, с. 57, № 197).

62 Е. Алексеева, Античные бусы Северного Причерноморья (Свод археологических источников, вып. Г I—12, М., 1978, с. 25, табл. 25/16, с. 19, табл. 21/10, 52, 22/23, 25, с. 74, табл. 34/47); Археология СССР. Античные государства Северного Причерноморья, М., 1984, табл. С VII (42, 43).

63 Б. Петерс, նշվ. աշխ., էջ 81։

64 Հ. Խորայելյան, Պաշտամունքն ու հավատալիքները բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 74։

65 Վ. Բդոյան, Երկրագործական պաշտամունքի մի քանի հետքեր հայերի մեջ (Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 3, Երևան, 1950, էջ 35)։

66 Ս. Հարությունյան, Հայ ժողովրդական հանելուկներ, Երևան, 1965, էջ 10—11, № 73 (ա, բ, գ), 78։

կաթե օղով վեգերը եղել են մանկապաշտպան հմայիչներ և կախվել են երեխայի օրորոցից՝ միաժամանակ օգտագործվելով նաև որպես խաղալիք։ Խոշոր եղջերավոր կենդանիների վեգերը, որոնք կոչվել են «կոռա», պահել են պատերի խոռոչներում, դրանց փոշին դեղամիջոց էր համարվում67։

Այսպիսով՝ հարուստ հնագիտական նյութի զուգորդումը ազգագրական նյութերի, ինչպես նաև մեզ հասած գրավոր աղբյուրների հետ, թույլ է տալիս ենթադրել, որ տարբեր կենդանիների վեգերը, իրրև հմայիչներ և խաղամիջոցներ, հանդես են գալիս վաղնջական ժամանակներից և հարատևում են մինչև մեր օրերը։ Դրանք հնարավորություն են տալիս ուսումնասիրելու և ամրողջացնելու մեր պատկերացումները մեզ հասած ժողովրդական սակավաթիվ խաղերի, հմայիչների ու հավատալիքների մասին։

67 Հմմ, էջ 32։

Ն. Գ. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ